

ԱՍՏՈՒԱԹՈՒՅԻՆԵՐ ՊԱՐՍԻՑ ՅԻՆ ԿՐՈՆԻ ՄԷՋ

Ա.

Բ.

ՄԻ ՔԻՉ ԹԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1. Ավեստան երբ է փափառութեան ենթարկուել, գծարկն է՝ ճշգրել տարեթիւը: Մազդեզեան կրօնի ոսկեայ դարը, սակայն, սկսում է Սասանեանց հարստութեան սկզբնաւորումին (226 թ. Քր. յետոյ): Արաբի Ահաշիտան Պարսից մէջ իբր մեծ աստուածուհի արդէն գոյութիւն ունէր Սասանեաններից վեց հարիւր տարի առաջ: Կարծեմ բաւականին չին:

2. Դարեհ Մեծի յաջորդներից Արաաքսերքսէս Մանմանը (404—358 թ. Քրիստ. առաջ) իր արձանագրութեանց մէջ Ահուրա, Մազդային հաւատար է ճանաչում Միթրան և Արաիվի-Ահաշիտան. (Weissbach. Die Keilinschriften der Achaemeniden. Leipzig 1911 թ.): Այս փաստէն եաքը հազիւ կարիք լինի առանձնապէս շեշտել, թէ Պարսից չին կրօնի մէջ Արաիվի-Ահաշիտան ճանաչուած էր՝ հաւատար Արամազդին:

3. Դարեհի (522—425 թ. Քր. առաջ) և նրա յաջորդների ժամանակ Պարսիկներն անշուշտ մէկ կրօն ունէին. արդ, այդ կրօնը ճանաչում էր մէկ շարք աստուածուհիներ՝ համաձայն Ավեստայի (և Գեաթաների): Դարեհ Մեծը Բիսիթունի (Բէհիսթունի) ժայռերի վրայ գրոյմած արձանագրութեանց մէջ առանձնապէս յիշում է շարութեան մեծ աստուածուհի — Դաէվայի (Դաէվա, Դիօ, Դէուս, Դոյնն են, — Դրաուգա-ի (Draouga) անունը. (Bezolde. Die grosse grosse Darius Inschrifte auf Felsen von Behistun. հր. 1881 թ.):

ԹԷ ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

չին ճշմարտութիւն է, թէ գէշ բան է աղբիւրներին անձանօթ՝ սխալումներ անել.

4. Անցնինք Գեաթաներին (Gâtha), որ Պարսից չին կրօնին օրհներգութիւններն են, ինչպէս մեր շարականները: Գեաթաներն ամփոփուած են Avestaի Iasna (Եասնա) բաժնի 28—34, 43—51 և 53 գլուխներում: ա. «Երբ Աշա-ն (Asha) կանչուի, և Մազդան և մառցեալ Ահուրաներն իրենց կոչել տան և՛ Աշա-ն (Ashay) և՛ Արամատի-ն, Զանադիւր լեր, ո՛ր Վոհու Մանահ (Vohou Manah) ինձ համար շահել կշաօթբան (Khshaothra = տիրական իշխանութիւն), որի յաւելումով մենք Դրուդին (Դրաուգա) յաղթահարել կը կարենանք» (Ch. Bartholomae. Gatha. 31 գլ. 4, հմ.). բ. «Ինձ նեցուկ լինելու համար, դու ամենահեռաւոր, պէտք է նրանք տէրութեանդ անպարագիւի բաները՝ ո՛ր Ահուրա, իբր վիճակ՝ Վոհու Մանահի՝ ազաւորեալ Ո՛ր սրբուհի Արամատի (Արամատի), հրահանգիր Դաէվային (աստուածուհի)՝ Աշա-ի (Asha) մասին» (Անդ. 33 գլ. 13 հմ.). գ. «Երբ ես սուրբին ճանաչեցի, քեզ, այնտեղ, ո՛ր Մազդա, երբ Վոհու Մանահ-ն մօտս եկաւ, երբ ինձ գունապեղ ճուշնամատարին աւետել կ'ուռուցանէր...» (Անդ. գլ. 43, հմ. 15.).

դ. «Ի շնորհս Աշա-ի ճանաչեցի նրան, ո՛ր Մազդա, որը կեանքն ստեղծեց, Գործն բարի Վոհու Մանահ-ի հօրը, բայց դուստրը բարեջան Արամատի-ն է» (Անդ. 45 գլ. 4 հմ.).

ե. «Ո՛ր Աշա, Մազդահ...բարի Ադա-ի (Աստուածուհի) հետ եկ ինձ մօտ, լեր ինձ պաշտարան» (Անդ. 49 գլ. 1 հմ.).

դ. «... Նոքա բոլորը պէտք է Հարվա-տաաի (Ահուրաստ) և Ամերետաաի համին, Վոհու Մանասի օգնականութեամբ» (Անդ. 45. 44. 5. հմ.)

է. «Ընձեռամբ Արմատաի և Աշաի, ո՛ր դու Ահուրա-Մադդա, բարեբարոյ վիճակի մանասարումը պիտի գլուխ հանես (Avesta, Jasna, 18 44. 7 հմ. Wolff, 1924 թ.)

բ. «Սուրբհադի Ահուրա Մադդան... Վոհու Մանասը... Աշա Վահիշթան... Կհշ-շաթրա Վաթրիան... սրբուհի բարի Արմա-տան... Հաուրվաթը... Ամերետաթը... փա-ռաբանում ենք մենք» (Անդ. Sih rocak (սոչակ), 2 44. 1—7 համար.)

թ. «Բարի Աշաի-ն (Ashay)... դուստրը Ահուրա Մադդաի, քոյրը Ամեշա Սպենտաների (Amesha Spenta) ... գալիս է յօգնա-կանութիւն նրան ... որ իրեն է կանչում» (Անդ. Jast. 17 44. Art Jast, 1. 1—2 հմ.)

ժ. Ո՞ր Աշաի (Ashay)... քո հայրը Ահու-րա Մադդան է, մեծը Եադատաներից, և լատադոյնը Եադատաներից. քո մայրը սրբ-բուհի Արմատաի-ն է» (Անդ. 2. 16 հմ.)

ի. «Փառք քեզ, ո՛ր հղորագոյնդ Արդիվի, ո՛ր հղոր Աշա սրբուհի անադարա (անաշխա) Արդիվի» (Av. Nyayishn. Քսուարշեր Nya-yisha (Նիաիիշա) 19 համար):

ժա. «Փառք ... անարատ (անաշխա) աշտուրը ջուր Արդիվի-ին, Մադդաի ստեղծած բոլոր ջրերին...» (Անդ. 4 Ardivisur Nyayishn (Արդիվաուր Նիաիիշն) 10 համար.)

Ինչ հարկ էր ազապույեղ, արվնք, ու այս բոլորը ոչ թէ այս ու այն գիտնականի խօս-քերին համաձայն, այլ Պարսից հին կրօնի սրբազան գրքերի փաստարկութիւններովը, որոց ստաջ սրեւէ ծամածռութիւն ձիծաղ կարող է շարժել:

5. Արդիվի և Անուշխա բառերը հնդ օ. արիական ծագումն ունին. Արդիվի՝ գետի, ջուրի անուն է, իսկ Անաշխա նրա ամա-կանն է, որ կը նշանակէ անարատ, անբիծ, կոյս, ֆրանս. immaculé, անգլ. immaculate, գերմ. unbefleckt, makellos. Արդիվիի ամա-կանը Անաշխա է, ինչպէս տեսանք: Անուս ինչ տակ է, չգիտեմ, սակայն մի

բան ճիշդ է, թէ այ եգիպտական և ոչ էլ ասորա-բաբելական գիցարանութիւնը չեն ճանաչում Անուս աստուածութիւն: Խար-զաթութիւն, թէ ագիաութիւն, չգիտեմ, բայց իրողութիւն է, որ Քաղդէացիք (Chaldée), որ ժամանակով աւագ են Ասորա-Բաբելացիներէն, ունէին մէկ Աստ-ւածուհի «Աննաս» (և ոչ Անուս) անուամբ, որ համարեա՛ր նոյնանում էր Արդեմիթին: Անուսը բնութիւն-երկիր, մայր և անուցա-նող աստուածութիւնն էր:

Շա՛տ թէական է նաև, թէ Արդիվի ծագումն իշտար կամ Աստարտէ աստու-ծուհուց է, այսինքն որա նոյնութիւնը, դոցա աղերսն հիմնական ուսումնասիրու-թեան է կարօտ:

6. Հերոդոտն ասում է, թէ Պարսիկ-ները Vénus (Աֆրօդիտէ, յունականում) աստուածուհին անուանում են Միթրա, Աստ-րեստանցիք Միլիթթա, և Արարները Ալիթթա. (Պատմ. Cléo, Ա. գիրք. CXXX, II. հատւած), որից պարզ է թէ Միթրան իր հիմնականում իգական է եղել, ինչ որ զարմանալի է: Միթրան աղերս ունի նաև հայկական գիցարանութեան հետ:

7. Մադդային հաւատար Asha (Աշա) հոգի աստուածութիւնը Պարսից կրօնի մէջ փոխ-աստութիւն է արեւելեան արիւններից, որի նախատիպը Վեգաների Ռիդան (Rita)-ն (Աստուածուհի) է, մինչդեռ հին Պարսից մէջ Աշա-ն (Arta) արու է: Այս ձեւափոխում-ները խիտ սովորական են հին կրօնների մէջ:

8. Avesta-ի մէջ Մադդան կոչւում է Ահուրա, Ահուրաներից մեծագոյնը, որ նշանակում է աստուածներից (Ահուրանե-րից) մեծագոյնը: Ահուրա են նաև Ամեշա սպենտաները (սպենտա Մախնու, Աշա Վա-հիշթա, Վոհու Մանաս Արմատաի, Կհշա-թրա (բոս Գեաթաների), Հաուրվաթ, Ամե-րետաթ (բոս Եանա-ի և Եատո-ի): Բաց ի գոցանից, Ահուրաներ են (աստուածներ) նաև Աշաի (Ashay), Ադա (Ada), Դահնա (Daena), Տոշնամատայ (Toushnamatay), և այս բոլորն ըստ Գեաթաների, և այլն:

Ըստ այսմ' աստուածունհիւներ են Արմատաի, Աշաի, Ագա, Դանեա, Տուշնամատաի, Արշիլի, (անահիտա), Հաուրվաթ, Ամերեթաթ, Դրուգ կամ Դրաուգա: Կարծեմ՝ բաւականին շատ, ու շատ նման յունական դիցաբանութեանը, ուր աստուածները համարեա՝ մէկ ընտանիք կը կազմեն:

9. Ավեստայի անուան վրայ, նրա բովանդակութեան նկատմամբ, Զէնտ բառը ոչինչ չէ աւելացնում, ու եթէ չգործածուի, ոչինչ կը պակսի: Զէնտ յատուկ անուն չէ, ու եթէ աշխարհիկ լեզուով ուղեհայկեր ար-

տայտայտել, պիտի տաէինք Ավեստայի մեկնութիւնը, բացատրութիւնը: Զէնտ՝ եւ ո՛չ լեզու կը նշանակէ, ինչպէս առաջ կարծում էին, քանի որ Ավեստայի լեզուն լի է հէյլի է: Նայիլ՝ N. Soderblom. H. Religions, 362 երես:

Ինչ խօսք, որ Զարա-թուստրայի մասին սխալած եմ, երեւութական մէկ հանգամանքէ տարած՝ բուն Ավեստայէն: Սխալը խոստովանելն առաքինութիւն է:

ԴՈՒՏ. ԱՐՄԷՆ Ծ. Վ. ՂԱՃԵԱՆ

ԹՈՎՈՒ ԵՐԿՈՒ ՄԵԹ ՆԵՐՇՆՁԵԱԼՆԵՐ⁽¹⁾

Տեսայ Շապանեանի յուլյագրած նրկարները, ու մտածեցի ծովու միւս սիրահարին, մեծ նկարիչ Մախոխեանին, որ աշտըմ նիս կը բնակի և զոր Մարտիրոսացիք լաւ կը ճանչնան՝ իր ներշնչման հմայքն ու տաղանդին բարձրութիւնը գնահատելու առիթ ունեցած ըլլալով:

Շապանեան ծովը կը սիրէ անշուշտ՝ բայց կը թուի թէ անոր համար չունի այն բաճարացի պաշտումը որ Մախոխեանի մօտ կատարեալ յաճախանք մը դարձած է: Շապանեան գիտէ լսել նաեւ ծաղկանց լեզուն, և զմայլելի կերպով կը վերապրեցնէ ներգաձնակ փունջերու փափուկ ճաճանչումն ու գիւրաբեկ շնորհը: Բայց կը զգայուի որ ծաղիկներու հրապոյրը չի կրնար բաղդատուիլ այն միւս արեւոյնութեան որուն կտ-

խարդանքը կը կրէ արուեստագէտը՝ առտիճան առ աստիճան՝ ծովափի մը պաշտելի տարածութեան առջեւ, ուր օրհասական արեւի մը կարմիրը և առաջին ստուերներուն մոլորազոյն երանգներն ա՛յնքան սրտապաւ բանաստեղծութիւն մը կը յալուցանեն:

Շապանեան նկարիչն է խաղաղ տեսիլներուն: Երբ ուղէ արտայայտել իրենց ցօղուններէն անջատուած ծաղիկներու աժգոյն ժպիտը կամ ալիքներուն վրայ արեւուն հեւացող մնաք-բարովը, իր զգայնութիւնը բնութեան զգայնութեան կը միախառնուի՝ անգործացման ու լուսութեան գաղջ պահերուն միայն: Իր էութեամբ՝ ան նկարիչն է հոգեկան խաղաղ տրամադրութեանց: Տան ներքին տեսարաններու ինչպէս եւ արտաքին բնանկարներու մէջ, իրերուն բնդարմացմանը կը սպասէ եւ մարդ կը վարձուի կարծել թէ իր աշխատութեան ժամերը՝ առաւօտեան ժամերն են ուր վարդ երազանք մը հօրիզոնը կը պարուրէ և իրիկուն ժամերն ուր նոյն երազանքը, մանուշակի թոյրեր զգեցած, վերջալոյսի երանգներուն մէջ կը հոսադի:

1. Սիրուն ֆրանսերէնով մը գրուած այս յօդուածը, որուն Թարգմանութիւնը կ'ընտանք, հրատարակուած է Մարսէյի La Vie Marseillaise շաբաթաթերթին մէջ՝ Շապանեանի վերջերս Մարսէյ սարքած ցուցա հանդէսին առթիւ:

Դ. Խ.